



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀԻՇԱՏԱԿԱՐԱԸ

1910

N: ԺԵ(15)

Կ. ՊՆԼԻՍ

ՀԵՌ  
577



14017

467

# Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ, ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ, ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒԼՆ. ԵՒԼՆ.

1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400ԱՄԵԱՅ-ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ԱՌԻՓՈՎ

ԿԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Կ Ա Ջ Մ Ե Ց  
Վ. Գ. ԶԱՐԳԱՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊՐԱԿ ԺԵ. (15)

- |                             |   |          |
|-----------------------------|---|----------|
| 66. Նահապետ Ազուլեցի        | 3 | Պատկերով |
| 67. Զափարիա Պատրիարք        | 2 | »        |
| 68. Մատթեոս Պատր. եւ Կրդկ.  | 2 | »        |
| 69. Տֆ. Գաբրիել փաշա Սեւանի | 2 | »        |
| 70. Տֆ. Միքայիլ Գառապեան    | 1 | »        |
| 71. Խորեն Ա. Եպիսկ. Նար-Պէլ | 5 | »        |



ԱԶՍՏ ՄՍՏԵՆԱՇՆԱՐ ԹԻՒ 20

ԱՆԳՐԵԱՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ն Շ Ա Ն - Պ Ա Պ Ի Ե Ս Ա Ն  
1910



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Ց  
Վ. ԵՒ Պ. ԶԱՐԳԱՐԵԱՆ ԵՂՐԱՐԳ  
Կ. ՊՈԼԻՍ

ԷՈ  
17

# ՆԱՀԱՊԵՏ ԱԳՈՒԼԵՑԻ ՈՐԴԻ ԳՈՒԼՆԱԶԱՐԻ

1629—1695

(ՏՊԱՐԱՆ «ՎԵՆԵՏԻԿ» 1687—1695)

Ծնած է 1629ին Ագուլիսի մէջ և զաւակն է Գուլնազարին:

Ազնիւ ու ազգասէր անձ մը եղած է և երևելի հանդիսացած է ժամանակին իր ազգագուտ գործունէութեամբ որ կ'սկսի 1653ին:

որոնք են Գաւանց բուրդ (1695), գործակցութեամբ Զուլայեցի Խարտաշենց Պարոն Անտոնին. Պարգաբանութիւն Սաղմոսաց՝ (տես թիւ 186) Տ. Յովհաննէս վրդ. Պոլսեցոյ ձեռքով (1687 սեպտ. 10) որուն մէջ կը գտնուի իր լուսանկարը (տես թիւ 185):

Սոյն երկու գրքերուն համար շատ դրամ ծախսեց Նահապետ Գուլնազար, զեղեցիկ տառեր ձուլել տալով հաստատեց նոր տպարան մը Վենետիկի մէջ՝ մատակարարելով ամէն պէտքերը:

Իրեն սպասաւոր Թոմայի որդին, Ագուլեցի Ազատի Աստուածատուր մեծ ջանք և աշխատութիւն ունեցաւ տպարանին համար, օգնելով սրբագրութեան և մըշտ ձեռնտու գտնուելով Յովհաննէս վարդապետին:

Նահապետ իրեն գործակալ ըրած էր յիշեալ Աստուածատուրը և կտակով նուիրած է անոր 40 ոսկի Վենետիկեան և իր հոգւոյն համար ալ կը պատուիրէ քիչ օրուն մէջ երկու հազար պատարագ ընել տալ որուն համար 500 տուքազ թողած է:

Ընդհանուր ժառանգորդ կը կարգէ իր թոռները քեռեֆիղայ և փեսան Առաքել՝ որդւոյ Թեոսալիայ Ագուլեցոյ:

Թէև կը փափագէր Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ թաղուիլ, որուն կը կտակէ 200 տուքազ և իր սպասաւորին 250 տուքազ. բայց յայտնի չէ թէ ինչո՞ւ. Հայոց եկեղեցին չէ թաղուած այլ մօտը Ս. Յուլիանոս Լատինաց եկեղեցին զատ տապանի մը մէջ:

Իր ունեցած գոյքերը կը գտնուէին Պոլիս, Զմիւռնիա, Հոլանտա և Լիվոնոյ:

Մեռած է 1695 Յունվար 1ին չրգողութենէ:

Պարգաբանութիւն Սաղմոսացի (1687) սկիզբը հետեւեալ ստանաւորը գրած է.

Եւ Նահապետ նուտտ հողի  
Որ եւ որդի Գուլնազարի  
Ինդջիւ բընիկ Ագուլեցի  
Զոտանտուրս շորագրիցի  
Ի նորերգունս Մեկնչի  
Բուն Սաղմոսին Մեծին Գուլի

6570-Վ. Կ

577-ԼՎ +

ՀԳ. 579



185. Նահապետ Ագուլեցի


Ինք երեւելի վաճառական և բարեսէր անձ մըն էր. Ս. Խաչ եկեղեցւոյն շատ սպասներ նուիրած է և Յայտուուրք մը գրել տուած է Պոլսոյ մէջ 1676ին որուն համար 110 դրշ. ծախսած է (ժամանակին կ'արժէր մօտաւորապէս 500 ֆրանք), պայման դնելով որ, ո՛վ որ ուզէ առնել կամ տպագրել տալ, նշանակուած գնոյն համեմատ եկեղեցւոյ անօթներ պէտք է նուիրել:


Իր ուսումնասիրութիւնը և բարեսպասութիւնը կը վկային իր սպագրել տուած գրքերը

Յիշատակարան

211

14017





186. Գուշնագարի սպարաբնու Նրատարակումը պարզաբանութեան առաջին էջը

Չար փափաքամը յոյժ խնդրեցի  
 Եւ օգնութեամբ Տեսաւն գտի  
 Տեսանելով ի յայլ լեզուի  
 Յօժարեցայ յայլով բանի...  
 Աշխատանք Յովհաննիսի  
 Ստամբուլցի վարդապետի...  
 Բողոքս գրամբ Վասնեցի  
 Ի նեղութեան ժամանակի  
 Մինչդեռ ըզստ տղաբեցի  
 Եւ ի վախճան իւր Տատուցի:

Սոյն գրքին հետաքրքրական մէկ էջը կը կազմէ պատկեր մը որ կը նրատարակենք. այդ պատկերը կը ներկայացնէ ժամանակին Պատարիւրքը և կամ վարդապետ մը որ եկեղեցւոյ ամպլոնէն կը քարոզէ ժողովուրդին, 1687ի Պատրիարքն է Կարապետ կամ Կրպօ կոչուած տգէտ քահանայ մը, կամ պատրիարքն ու կամ թէ Յովհաննէս վարդապետն է «Պարզաբանութիւն Սաղմոսաց»ի այս պատկերին մէջ քարոզողը, մեղի այդ պէտք չէ, որքան կարեւոր է այն ատենուան տարազները մեր նախահայրերը գլուխներն բախտոց կը կապէին և ճիւղապէ կը հագնէին, միայն թէ իրենց կապած բախտոցը սեւ


էր, զանազանելու համար Քրիստոնեան՝ Իսլամէն: Փաճանակը և տարազը ներկայացնող պատկեր մին է որով անշուշտ մեր ընթերցողները պիտի հետաքրքրուին (տես թիւ 187):

Գալով Պարզաբանութեան սօճին մաս մը կը ներկայացնենք գրութեանը, որուն մէջ Չանք մը կայ աշխարհաբար և դիւր հասկնալի լեզուով գրելու:

Այսինքն, սչքը չկայ որ յիշուած մէկ բարեգործութեան նշան մի անհնայ, եւ մէկ մարդ մի այլ չի գտլիր, որ Աստուծոյ կամքն կատարէ, կամ նորա օրինացն եւ պատուիրանացն հնազանդել կամենայ:

Այսինքն, եւ ասաց թէ այդ ինչ պէս կուրութիւն է՝ որ այդչափ մարդիքը որ չարութիւն եւ անօրէնութիւն գործելոյ յետնէ են, ամենեւին չի՛ ճանաչեն եւ չիմանան իւրեանց մղտութիւն եւ պակասութիւնն:

Այսինքն, դիմ ժողովուրդն եւ դիմ ծառայքն կու



187. Պարզաբանութիւն գրքէն հետաքրքրական էջ մը ժամանակին Պատրիարքը կը քարոզէ ժողովուրդին

հաւածէին կու ըստանանէին եւ հայ ազգուրի նման կուլ կու տային, եւ արհամարհելով զբան մարգարէից ամենեւին չի՛ կամեցան իւրեանց աչքն բանալ եւ ճանաչել զիմ որդին միտն յիտուս քրիստոս որ է աստուած ճշմարիտ, եւ օրհնել եւ գովաբանել զանուն նո-

րա, այլ խորհեցան եւ ասացին ըստ զուկասու, սա է՛ ժառանգն, եկայք ըստանցուք զսա:

Այսինքն, թողելով աստուծոյ երկիւզն այնպէս տեղ վախեցան, որ ամենեւին ա՛հ եւ երկիւզ չկայր, իբր վախեցան ի կայսերէն հաստակեցուց, թէ չի՛ լինի թէ բարկանայ իւրեանց վերայ, վախեցան ի զօրացն հաստակեցուց թէ չի՛ գան իւրեանց երկրին եւ ազգին տիրապետեն, ըստ այնմ եթէ թողու՞մք զնո այնպէս, ամենեքին հաւատան ի նա, եւ գայցեն հաւատք, եւ բառնայցեն զազգս մեր եւ զտեղի. եւ ապա իւրեանց մարտութեան միջուկն կորան, զէրէ աստուած փառասէր եւ մարդահասոյ, մարդկանց սուկտանքն կու ցրուէ, իբր ուժն եւ կարողութիւն եւ հնարագործութիւն կու ոչնչացնէ եւ կու փչացնէ:

Այսինքն, որ ամաչեն եւ ամօթ լինին աշխարհիս

վերայ, զէրէ աստուած անարգեց արհամարհեց եւ նախատինք արար զիւրեանք ամէն ազգերի միջում:

Գուշնագարի Նահապետ անջնջիլի կը մնայ պատմութեան մէջ իր մեկնաստութեամբը որ նպատած է ապարան բանալով և օգտակար գիրքեր հասարակելով և առ այդ բունական զուժար մը ծախսելով:

ԱՂԵՒԻՐՆԵՐ. — Սիսական Զ. Գ. Ալիբան էջ 334—336. — Մատենագրութիւն Զ. Գ. Զարեանիկեան. — Պատմ. Հայկ. Տպագրութեան Զարեանիկեան էջ 140—142. — Պարզաբանութիւն Սաղմոսաց Գուրի Մարգարէի 1687. — Պատմ. Տպագրութեան Ա. Կ. Ելին.:

### ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱՂՋՈՒԱՆՑԻ

1719-1799



188. Զաքարիա Պատրիարք

ւելով 1735-ին վարդապետ ձեռնադրուած է և քիչ ետքն ալ եպիսկոպոս՝ Շամախեցի Յակոբ Կաթողիկոսէն, նախ իբր նուիրակ եւ զուկիս և ետքն ալ 1768-ին իբր նուիրակ զրկուած է Պօլիս: Էջմիածին վերադարձած և երկրորդ անգամ ալ 1772-ին իբր նուիրակ դարձեալ Պօլիս եկած է և Ս. Գէորգ եկեղեցւոյ առաջնորդարանը կ'եցած: Պատրիարք բնաբուեցաւ 1777-ին Մայրեկեղեցւոյ մէջ ուր հաւաքուած էին եկեղեցականները, երեւելիները և էնապիսեբու ձերբը: Իր պատրիարքութեան օրով նշանաւոր է Պօլսոյ 1778-ի ժանտախտը: Սարգիս զպիւր կը պատմէ թէ միայն Պալատիւ թաղին բնակիչներէն երեք ամսուան մէջ (Մայիսէն Օգոստոս) 1000 հայ զոհ գացած է ժանտախտէն:

Նոյն տարին Զաքարիա Պատրիարք Փետր. 21-ին և Յուլիս 26-ին ժողով կը գումարէ Պատրիարքարան, ուր կը Չանայ համոզել Հայ Հռոմէականները վերադառնալու Հայ Եկեղեցւոյ գիրկը և երբ չը յաջողիր խտուրթեամբ կը վարուի անոնցմէ ոմանց զէմ: Իր խտուրթեանը կը կեդրոնանայ մասնաւորաբար հարուստ վաճառական Բեդրօ Զաքարի զէմ: Այս միջոցներուն Սիմէօն Կաթողիկոս կը վախճանի և Դուկաս Կաթողիկոս կը յաջորդէ, Զաքարիա Պատրիարք չուզեր ճանչնալ զինքը ընտրութեան մասնակից չըլլալուն պատճառաւ, բայց ի վերջոյ տեղի կու տայ Դուկաս Կաթողիկոսի խոնկո բնութեան պատճառաւ, այս մասին գրած ենք

Զաքարիա Փառուզեան Կաղզուանցի որ խըլը կը կոչուէր ծնած էր 1719-ին Կարսի վիճակին մէջ Կաղզուան գիւղը:

Իր հայրը Կաղզուանի հարուստներէն էր. անունն էր Բարիլոյս Փառուզեան իսկ մայրը Նազէ՛ Կարսի երեւելիներէն մէկուն աղջիկը:

Զաքարիա էջմիածնայ վանքին մէջ կրթը-

արդէն Ղուկաս Կաթողիկոսի կենսագրութեան մէջ :

Այս միջոցին Չաքարիա՝ Հայ-Հռոմէականներուն հանդէպ աններող վարմունքը կը շարունակէր, 1780 տարւոյն մէջ իր խտառութեանց ենթակայ կ'ըլլային 10ի չափ Հայեր, գրեթէ ա-

նամակով մը կը հաղորդէ կառավարութեան թէ «Հայոց Պատրիարքը Հռոմէականաց հալածանքին պատճառաւ մեր Թրիէստէի նաւահանգիստը եւ կող գացող վաճառականները կ'արգելէ և մեզ կը մեատէ», ասոր համար կառավարութեան քաղաքի կու տայ որ Պատրիարքը վար առնուի :

Աւստրիոյ դեսպանը Պոլիս հասնելով ժողով կ'ընեն և Ապարիւ-Րագագ փաշայի հետ երկար խորհրդակցութիւններ կ'ըլլան, Դեսպանը կը պնդէ իր պահանջքին վրայ թէ՛ Պատրիարքը մեատակար կը դառնայ իրենց առևտրական շահերուն, փաշան ալ կը պատասխանէ թէ պէտք է քննութիւն կատարել հասկնալու համար թէ Պատրիարքին բռնած ընթացքը արդարեւ մեատակար է անտեսական շահերու :

Թարգմանը շարունակ երկու օրը անգամ մը նախագահին դիմելով «այս խնդիրը մեր դաշնագրութեանց համեմատ կուզեմ, կը պահանջեմ» կ'ըսէր, որու ղեկիս էֆեֆէին կը պատասխանէր, — Ձեր այդ պահանջը դաշնագրութեանց պայմաններուն չեն համեմատիր, Հայոց Պատրիարքը թագաւորին այսքան հազար հպատակներուն վրայ պաշտօնակց մը ըլլալով օտար միջամտութեամբ պաշտօնակալութիւնը քաղաքային օրէնքներու հակառակ է, բարեկամ տէրութիւն մը կառավարութեան օրէնքներուն մեատ բերելիք առաջարկ չը կրնար ընել :

Իր պատասխան Դեսպանը կ'ըսէ. — Կառավարութեան փափաքն ու կամքը այս է :

Քանի մը անգամներ Նախարարաց Խորհուրդին մէջ կը խորհրդակցին և սա որոշման կուգան որ Դեսպանը եթէ երբէք այս խնդիրը Վիեննա տեղեկագրէ և այս առթիւ Արտաքին Գործոց Նախարարէն Պատրիարքին պաշտօնակալութիւնը պահանջող գիր մը գայ, այն ատեն խնդիր չհանելու համար Պատրիարքը պաշտօնակալ ըլլուի, սակայն նկատելով որ պիտի տարածայնուի թէ Օսմ. Կառավարութիւնը ստիպման տակ պաշտօնակալ ըրած է Պատրիարքը և այս պատճառաւ միւս Տէրութիւնները և

մանաւանդ մեր ներքին խնդիրներուն և մասնաւորաբար եկեղեցւոյ խնդիրներու խառնուելու պատճառ փնտռող Ռուսիոյ Տէրութիւնն ալ այս կարգի խնդիրներու պիտի խառնուի և հակառակ պատասխան մը արուած ատեն Աւստրիոյ Դեսպանին պահանջումով Հայոց Պատրիարքը պաշտօնակալ ըրիք պէտք է որ իմ պահանջն ալ նկատի առնուի և ինչի պէս խօսքեր պիտի ըլլան, ասոր համար կը մերժեն առաջարկը Աւստրիոյ դեսպանին, սակայն միւս կողմէն Չաքարիա Պատրիարքը կանչելով, Բ. Դուռը կը կանչեն նաև քանի մը Հայ Հռոմէական երեսելիներ :

Պատրիարքին կ'ըսեն թէ դուռն չկրցար պէտք եղածին պէս կառավարել ազգդ և այդ պատճառաւ շատ մը հայեր կաթողիկ եղան :

Երկար դիւանագիտական բանակցութիւններէ ետք վերջապէս Չաքարիա պաշտօնակալ եղաւ և Պրուսա աքսորուեցաւ, 1781 մայիս 20ին իր տեղը Պատրիարք անուանեցաւ Պրուսայի առաջնորդ Յովհաննէս կար. որ նախորդին բոլորովին հակառակը ըլլալով, շատ թոյլ ըլլալուն, չկրցաւ ազգին սիրելի ըլլալ, ասոր վրայ Ազգը պահանջեց իր հրաժարականը անանկ որ տարի մը հազիւ անցած էր երբ Չաքարիա Պրուսայէն 1782 մարտ 31ին Պոլիս բերուելով դարձեալ յաջորդեց Յովհաննէս Պատրիարքին : Իր այս երկրորդ պատրիարքութեան առաջին տարին օգոստոս 10ին, ստակալի հրդեհ մը ծագեցաւ որ 66 ժամ տեւեց և մոխիր դարձուց Պոլսոյ մէջ հազարաւոր տուներ, Ս. Գէորգ եկեղեցին, ինչպէս նաև 6 յոյն եկեղեցի հազարէ աւելի մարդոց կիզման պատճառ ըլլալով :

Չաքարիա Պատրիարք արկածականներուն մեծագումար նպաստներ բաշխել տուաւ :

1784 յունի. 26ին ժողով դուռնարուելով Պատրիարքարան, ուր ներկայ զանուեցան եկեղեցականներ և աշխարհականներ որոշուեցաւ ինչ օճակները գործածել փոխանակ Սիմէօն Կաթողիկոսի տօնացոյցին, և ուր որ կը գտնէին սոյն տօնացոյցէն կը բերէին Պատրիարքին որ այրել կուտար զանոնք : Հին տօնացոյցի գործածութիւնը տեւեց մինչև Չաքարիայի մահը և իր յաջորդին օրով դարձեալ գործածուի սկսաւ Սիմէօնի տօնացոյցը :

1784ի ատեններն էր որ էլ միամիտն նուիրակ եկած էր Սահակ վարդապետ, աճազին մարդ մը որ չչիտթուելու համար Սահակ Աճազին Կաթողիկոսէն, Սահակ Բ. կը կոչէին :

Սահակ կ'ատէր Չաքարիա Պատրիարքը. օր մը վիճարանութեան մը պահուն բարկանա-

լով ապտակեց զինքը, Կաթողիկոսը լսելով Սահակի տեղ նուիրակ գրկեց Պոլիս՝ նախորդ նուիրակը Մինաս Եպիսկոպոս, իսկ Սահակ Իզմիրի առաջնորդ ընտրուեցաւ ուր վախճանեցաւ 1792ին :

1791 Յունիս 23-ին Չաքարիա Պատրիարք ժողով կազմեց Մայր-Եկեղեցին և առաջարկեց 7 նոր կանոններ Երուսաղէմի համար, և ընդունել տուաւ, որոնց գլխաւորն էր «Երուսաղէմի Պատրիարքը պէտք է ունենայ վեց նազար իբրև խորհրդակալան, որոնք պիտի ընտրուին Միաբաններէն և առանց անոնց գլխաւորութեան բան մը չպիտի կրնայ գործել», այս կանոնները պարունակող պաշտօնագիրը որ կը կրէր Պատրիարքին և այն ատենուան Հայ երեսելիներուն ստորագրութիւնը կամ կնիքը պահուած է Երուսաղէմի Ս. Յակոբ վանքին մատենադարանը :

1798-ին Չաքարիա իր քսակէն 18000 դրշ. նուիրելով չինել տուաւ Գուրու-Չէշմէի եկեղեցին, զոր օծեց Փետրուար 28-ին : Իր ծախքով չինել տուած է նաև Մայր եկեղեցւոյ պատը և չըջափակին մէջ զանուած մեծ աւազանը որուն չինութեան յատկացուց 20,000 դրուշ, և իր կարգադրութեամբ առաջին անգամ ըլլալով աւստր մօտ հաստատուեցաւ ջրհան մը :


Չաքարիա Պատրիարք 1799 Մարտ 11-ին վախճանեցաւ գրեթէ ութսունամեայ, 25 տարիէ աւելի Պատրիարքութիւն ընելէ ետք : Հետեւեալ օրը փառաւոր հանդէսով թաղուեցաւ Գուրու-Չէշմէի եկեղեցին, հակառակ Մեծ Պահք ըլլալուն իր հոգւոյն համար երեք օր «բաց պատարագ» եղաւ Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն մէջ և 40 օր Մայր-Եկեղեցւոյ մէջ :

Կաղզուանցի կտակած էր Մայր-Եկեղեցիին իր ժամարարի զգեստը որուն ծախսուած էր 35,000 դրուշ, սակէ գատ ալ զանազան գումարներ կտակած էր բարեգործական նպատակներու :

Սարգիս դպիր Յովհաննէսեան գովելէ ետք անոր լրջութիւնն ու պատուասիրութիւնը կը մեղադրէ զինքը իր ազնուասիրտական ձեւերուն համար, կ'ըսէ թէ երբ քաղեր կամ ձի նստէր, արձանի կը նմանէր և թէ իր քարոզը խրթին էր և նուրբ որով լսողները բան մը չէին հասկնար : Չաքարիա գիտնական վարդապետներու (Սահակ Աճազինի և Թրակացի Յարութիւնի) հեռացման պատճառ ըլլալուն համար Սարգիս դպրէն կը պարսաւուի :

Հմուտ Աստուածաբան էր, և իր գլխաւոր արժանիքը եղաւ քիչ շատ ուսեալ հայ եկեղեցականներ նուիրել ազգին :

Անաւատիկ իր դամբարանին արձանագրութիւնը :



Handwritten Armenian text in a cursive script, likely a document or letter. It begins with 'Երևանէ 189...' and contains several lines of text.

189. Կոնդակ Չաքարիա Պատրիարքի

մէնքն ալ էնամի դատակարգէ, որոնց մէջ կը գտնուէր նաև ճամպազեաններու մեծ պատը Յարութիւն :

Չաքարիա Պատրիարք այնչափ առաջ կը տանի իր հալածանքը Հայ-Հռոմէականներու դէմ և այնչափ աներողութիւն ցոյց կու տայ որ, նոյնիսկ անոնց աքսորման կ'աշխատի, և Եւրոպայէն եկողներուն և Պոլսէն մեկնողներուն արգելք ըլլալ կ'ուզէ, անանկ որ Եւրոպական կառավարութիւններու զանգատին տեղի կու տայ : Աւստրիոյ Արտաքին Գործոց նախարարը

Մեծ վարդապետս այս մեր զգօն դերահաշակ եւ զգաստ  
 Ծնեալ յերկրին Կաղզուանայ ութսունամեայ հանգեալ աստ,  
 Ի Փոքուզեանց համեստ դարմէն մաքրանունը բարեբաստ  
 Դեռ մանկութեան սուրբ հաւատով բնաւորեալ ճոխիմաստ  
 Ըզներտ հաւատն ուղղաբաւան ետես ի սա սուրբ հոգին  
 Կոչեաց ի սուրբ էջմիածին լուսախոսոյց նոր յաղին  
 Արար ըզսա անդ միաբան վեհապետացն առ սոխն  
 Եւ վայեցոյց դերափառօք զէտ արուեստի առաւօտին :  
 Սրբոյ գահոյս ժիր գործակալ միշտ ուր ուրէք յաջողակ  
 Գեղեցկադէմ ահագնածայն եպիսկոպոս շնորհունակ  
 Էր բնախօս աստուածաբան եկեալ Պոլսոյ նուիրակ  
 Լուսաւորչիս գաւանդութեամբ ուղիղ մտօք դատարակ :  
 Ի գործ կրկնակ նուիրակութեան բարւոք ծանեան բարեկարգ  
 Չաքարիս արհիապանծս եղին Պոլսոյ պատրիարք  
 Հուչակեցաւ յոյժ ազգասէր եւ բարեբախտ դերայարգ  
 Ծինեալ զաման եկեղեցիս եւ հիւանդաց երկուս յարկ  
 Յոյժ ճոխացոյց շատ դպրատունս յսր հաստատեաց վարժապետ  
 Հասոյց զեօթնեակ եպիսկոպոս եւ զսրբեան վարդապետ  
 Չանայր զուսումն ճոխեւ ազգիս նախնի սրբոց յար հանգէտ  
 Պահեաց հանգիստ զազգ մեր տարւով քսան եւ վեց կեցեալ գէտ :  
 Չէտ սուրբ Սահակ ըզփայտ վշտաց հոգւն հայոց բարձեալ յուս  
 Յահէն պետիս բոլոր հերձուածք բերանաբակ տային խոյս  
 Ազգամբ հոգւոյն դիտաց եւր մահ ինդրեաց թաղիւ շիրմիս կոյս  
 Ակնունելով սուրբ ազօթից տամք ողոր ըն շնորհալոյս :  
 ԻՄԽԸ ԹՈՒՆ

հանգեալ յամի տեառն ԻՄԽԸ եւ Մարտի ԺԱ.

ԱՂՏԻՒՐՆԵՐ. — Կենսագրութիւն Կաղզուանցի Պօղոս գրուած եւ այժմ վերաբերի Օրմանեան Սրբազանի. — Ընդարձակ օրացոյց 1901 (Հ. Ասատուր). — Պատմ. Չամչեան Կ. հասոբ. — Սարգիս Յովհաննէսեանի ձեռագիր սեռակ. — Թարխիս ձեղճէք Ա. հասոբ 1194 թուին սկից. — Պատմ. Հայոց Պեղպեան. ելին:

## Մ Ա Տ Թ Է Ո Ս Չ Ո Ւ Խ Ա Ճ Ե Ա Ն

### Պ Ա Տ Ի Ա Ր Ք Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Ս

1802-1865

Ծնած է Պոլսոյ Օրթադիւղ թաղին մէջ 1802ին, աշակերար եւ ձեռնաստանն էր Յովհաննէս Չաւաչբաճեան եպիսկոպոսի : 1835ին Մատթէոս վարդապետ Պրուսայի առաջնորդ եղած եւ 1838ին եպիսկոպոս օծուած է Յովհաննէս Կարբեցի Կաթողիկոսէն, 1841ին Իզմիրի առաջնորդ եղաւ : 1844 յունիս 24ին Պատրիարքարանի մէջ ժողով զուժարեւելով Աստուածատուր Պատրիարք հրաժարեցաւ եւ իրեն յաջորդեց Մատթէոս եւ պիսկոպոս, որ 1844 յուլիս 17ին Պօլիս հասնելով Չմիւռնիայէն իր պաշտօնին զլուրը անցաւ : Իր առաջին գործը եղաւ հաշտեցնել ամիրաները եւ արհեստագիտները, ժողով մը կազմեց որ սեպտ. 14ին որոշեց յիշատակել Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսին անունը

Թուրքոյց հայ եկեղեցիներուն մէջ, 1828էն ի վեր Ամենայն Հայոց Կաթողիկոսին անունը չէր յիշատակուէր Ռուսօ-թուրք պատերազմին պատճառաւ : Արտշուեցաւ որ ա՛յ լուրովին դադրի էջմիածնայ նուիրակներու առաքումը ինչ որ 1828էն ի վեր արդէն դադրած էր վերոյիշեալ պատճառաւ : Պօլսոյ Պատրիարքը ինք պիտի զրկէր էջմիածնայ եղած նուէրները եւ Միւռնոյ էջմիւռնէն ուղղակի Պօլսոյ Պատրիարքին կը զրկուէր :

1845 յունիս 7ին հռոմէական հայոց նախագահ Անտոն վ. Հասունեան Մատթէոս Պատրիարքի այցելութեան եկաւ, որ յունիս 14ին փոխարինեց :

Բարեյիշատակ Ապտ-իւլ-Մէճիտ կայսրը ԻՔ-

թիխարի ականակուռ պատուանշան սուա Մատթէոս Պատրիարքի :

Խիստ միջոցներ ձեռք առաւ բարձրակարգութեան դէմ, քննութիւն մը երեւան հանեց թէ հազարաւոր հայ բարձրակարգներ կան Պօլսոյ մէջ, Մատթէոս զանազան միջոցներով մեծ մասը յաջուցեցաւ դարձնել նորէն Հայ. Եկեղեցոյ զիրկը :

Բանադրեց բարձրակարգութիւնը բնութեամբ բոլոր հայերը 1846 յունիս 20ին : Այս խստութեանց պատճառաւ յունիսի մէջ 40 հայ բարձրակարգներ միանալով կազմեցին «Պօլսոյ առաջին Աւետարանական Եկեղեցին եւ հովիւ բնարեցին իրենց Աբիտղոմ Տէր Առաջատուրանը» : 1847 նոյ. 3ին բարձրակարգները իբր անջատ հասարակութիւն ձանչցուեցան կառավարութեան :

1846 մարտ 27ին Ներսէս Կաթողիկոս գնահատելով Մատթէոսի գործունէութիւնը, ազամանդազարդ պնակէ մը զրկեց :

1847 մայիս 7ին կայսերական հրովարտակ մը հրամայեց որ Հայոց Պատրիարքարանին գործերը վարելու համար հաստատուի 14 եկեղեցականներէ բաղկացած հոգեւոր եւ 20 աշխարհականներէ բաղկացած գերագոյն ժողով մը Պատրիարքին նախագահութեամբ : Գերագոյն եւ հոգեւոր ժողովները սեւեցին մինչեւ 1860 Սահմանադրութեան հաստատման թուականը :

Այս միջոցին ամիրանները ծուռ աչքով նայիլ սկսան Մատթէոսի, որովհետեւ ան ինքնազուլի կը գործէր եւ Ամիրաններն ալ վշտանալու առիթներ կ'ունենային այդ պատճառաւ : Ինչ ետքը 1848 ապրիլ 1ին Մատթէոս Պատրիարք հրաժարեցաւ չկարենալով հանդուրժել Ամիրաններու արարքներուն : Մատթէոսի պատրիարքութեան միջոցին Պօլսոյ հայոց կրթական եւ բարոյական վիճակը զգալի բարւոքում կրած է :

Իր պատրիարքութեան օրով Պօլսոյ մէջ շինուած եկեղեցիներն են՝

1. Եէնի Գարուի Ս. Թաղէոս Բարթուղիմէոս (1846)
2. Գանախլի Ս. Երկոտասան Առաքելաքը (1846)
3. Գարակէօմրիկի Ս. Յովհան Ոսկերբան եկեղեցին (1847) եւ որ այրեցաւ 1900 յուլիս 6ին :
4. Պէօլիւքութէյի Ս. Հռիփսիմէ եկեղեցին (1848) ծախուք Գարաքէնեա Կարապետ եւ Գէորգ պէյերու :

1848 Հոկտ. 7ին Յակոբոս Սերբեան պատ-

րիարք բնարուեցաւ եւ Մատթէոս քաշուեցաւ Օրթադիւղ, ուր քարոզիչ եղաւ Յ տարիի չափ, 1851ին Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտ բարեհաճեցաւ նոր պատուանշան մը շնորհել անոր :

1853 Մայիս 11ին Նիկիթիդիոյ եւ Արմաշու Առաջնորդ կարգուեցաւ սակայն 1854 Գեկա.ին հրաժարելով Պոլիս վերադարձաւ : 1855ին Ատենա վաւ բնարուեցաւ Հոգեւոր Ժողովին եւ 4 տարի ետք 1858 Մայիս 18ին բնարուեցաւ Կաթողի-



130. Մատթէոս Պատրիարք եւ Կաթողիկոս

կոս Ամենայն Հայոց : 1859 Փետր. 1ին պապիւ ունեցաւ Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտ կայսեր ներկայանալ՝ որ Մէճիտիէի առաջին պատուանշանը շնորհեց անոր : 1859 Յունիս 2ին մեկնեցաւ Պոլսէն՝ Բօթի, իր հետն ունենալով Ազրիանուպոլսեցի Սարգիս Եպս., Աւետիս Պէրպէրեան եւ Մ. Ազարէզեան : Մատթէոս 7 տարիի չափ Կաթողիկոսութիւն ըրաւ եւ այդ միջոցին Ռուսահայոց դպրոցները բարգաւաճեցան, անոնց վարչութիւնը աշխարհականներու ձեռք անցան եւ անոնց համար տարեկան գումարներ ապահովուեցան եկեղեցիներէն եւ վանքերէն :


Վախճանեցաւ 1865 Օգոստոս 22ին : Իր աշխատասիրութիւններն են՝ 1854ին Փէշաբաճեան Գրիգոր պատուելի օգնելով հրատարակած է Յայտնաւորքը :

1842. 1848 Խորհրդածութիւնք շնորհաց եւ նշանաց եւ խորհրդոց քրիստոնէական Ս. Եկեղեցոյ :



*Մարտի 18-ին 1848 թ. Վաղարշապատ քաղաքում ծնված է Մանուկ Մատթեոս Մարտիրոսի և Երանդուհի Բաբայանի ընտանիքում։*

*Մանուկ Մատթեոսը ծնվել է 1848 թ. մարտի 18-ին Վաղարշապատ քաղաքում։*



191. Մանուկ Մատթեոս Մարտիրոսի և Երանդուհի Բաբայանի ծննդավայրը

### ՏՕՔԹ. ԳԱՐԻԻԷԼ ՓԱՅԱ ՍԵՒԵԱՆ

1822 — 1900

Տօքթ. Գարրիել Սեւեան՝ ծնած է 1822 Յունվար 6ին Բերայի մէջ և զաւակն էր Յովսէփ Գարայեանի որ իբր ուսումնասէր անձ՝ մեծ խնամք կը տանի իր զաւակներուն կրթութեան։

Գարրիել քանի մը վարժարաններ փոխելէ վերջ, Վիեննայի Միխիթարեանց վանքը կը զըրկուի 1835 Յունիս 15ին, ուր բոս սովորութեան անունը փոխուելով, Եսայի կը կոչուի և հին 8 տարի կը շարունակէ ուսանիլ։

Վանական այս շրջանը աւարտելէն վերջ կըր հեկեղեցական ուխտը պիտի ընէր, անկարող կը զգայ ինքզինքը և թողով Եսայի անունն ալ, վանքն ալ, 1843 Դեկտեմբեր 20ին կը հեռանայ Վիեննայէ և Պոլիս դառնալով՝ կ'որոշէ հետեւիլ բժշկութեան, և կ'արձանագրուի բժշկական դպրոցը 1844 Յունվար 7ին։

Կայս. Բժշկական Վարժարանը յաճախող առաջին Հայ ուսանողները եղած են՝ Ֆէրուհեան, Ասլանեան, Բուրանդիեան, Յովհաննէսեան և Սեւեան։

Վարժարանի տեսչութեան կողմէ Օրթազիւղի բժիշկ կ'անուանուի 1847 Սեպտ. 15ին կըր ամբողջ Պոլիսը քօրիքայի համաճարակէն կը կեղեքուէր։

Սեւեան 4 ամիս ճարտարօրէն կը դարմանէ հիւանդները։ 1849 Յունիս 20ին աւարտելով քննութիւնները կը վկայուի Տօքթօր յիշեալ ընկերներուն հետ, և կ'անուանուի բժիշկ Պոլսոց Մայթէփէի զինուորական հիւանդանոցին ուր ասորի մը ծառայելէ ետք կը նուիրուի ծովային բժշկութեան։

1850 Մայիս 15ին է որ Տօքթ. Սեւեան առաջին Հայը ըլլալով կը կարգուի բժիշկ Կայսերական Եանապը Պանքի մարտանախին, որ ամիս մը վերջ կ'ուղևորէր դէպի Թուրսոն։

Գարրիել Սեւեան կը զրկուի որ այս ատեն աւարտամբած էր և ուր Օսմ. բանակներուն Հրամանատար Պոնաբարդ Մուսթաֆա փաշայէն Բժեկապէս կ'անուանուի ծովային և ցամաքային հիւանդանոցներուն։

1854-52 պաշտօնավարելով 1852 Յունիս 2ին Սուրիա զրկուած նաւատորմին զլիսաւոր բժիշկ կը կարգուի և այդ պաշտօնին մէջ կը մնայ մինչև 1855, 1856 Օգոստոս 2ին Եգիպտոս կ'երթայ և կ'այցելէ հասթիւնները։

1857 Օգոստոս 13ին Անգլիա կը զրկուի Ֆէրիիէ մարտանաւով, այս ատիւ. Տօքթ. Սեւեան կը բարձրանայ Բայմազաւի աստիճանին։ 1857 Սեպտ. 24 Ֆէրիիէ փոխարինել մը բանուելով ընկղմելու մօտ կ'երթայ Սպանիոյ եզերքը Ֆէրրոլի մօտ ուր կը ստիպուի խորին նետել և մնալ ինը ամիս, նորագութիւններ կատարելու համար։ Հին ոչ միայն ըրբեւ բժիշկ անձնուիրութեամբ կը ինամէ հիւանդները, այլ և իբրեւ հաւատարիմ հրատակ իր Տէրութեան, անոր կենսական շահերն ալ կը պաշտանէ քաջութեամբ։

Ֆէրիիէ իր նորագութիւնները աւարտելէն ետք, 1858 Մայիս 8ին կըր Պոլիս կը վերադառնայ։ Սուլթան Մէճիտ իր այն զբօսանաւով Սելանիկ և Բիսա կղզին կը ճամբորդէ 1859 Յունիս 15ին, Տօքթ. Սեւեան դարձեալ բժիշկն էր Ֆէրիիյին և կ'ընկերանար կայսերական զբօսանախին։

Նոյն տարին կը զրկուի Եգիպտոս Թայիֆ չոգենաւով, 1860 Յունվար 2ին Թունուզ, նոյն տարին Յունիս 30ին Ֆուսատ փաշայի հետ Պէյրութ կ'երթայ դարձեալ Թայիֆ չոգենաւով։

Պէյրութէն վերադարձին, բաւական ատեն այլ և այլ մարտանաւերու մէջ իբրեւ բժշկապետ ծառայելով, 1860 Մայիս 3ին կ'ընտրուի անդամ Պոլսոց Կայս. Բժշկական Ընկերութեան։

Իր ընտիր բժշկական յօդուածները կ'երևան Gazette Medical d'Orientի մէջ։

1862ին Սեւեան պաշտօնավարած է Պոլսոց ծովային հիւանդանոցը և այդ միջոցին պատրաստած է ընդարձակ տեղեկագիրներ (1862-65), որոնք կը ներկայացնէր ամէն տարի բժշկական ընկերութեան։

1865 Հոկտեմբեր 18ին քօրիքայի մեծ համաճարակէն վերջ իբր ախտատուութեան վարժք կը ստանայ Կրկ կարգի Մեքիսիյէ պատուանդանը։ 1871 Յունվար 6ին բարձրագոյն հրամանաւ Մովային Բժշկ. Խորհուրդին անդամ կ'անուանուի և այս ատիւ. Պէյ տիտղոսով կը բարձրանայ միւրալայի աստիճանին, 1872ին նախադահ կ'անուանուի։



192. Տօքթ. Գարրիել փաշա Սեւեան

մանակի պահանջներուն համաձայն հիմնովին կը բարեփոխէ, դպրոցին նիւթականը կ'ապանովցնէ և կը յաջողի ընծայել ազգին՝ զարգացած երիտասարդներ։

1879 Օգոս. 13-ին Կայսերական Իզդէքսիին չոգենաւին բժշկապետ կ'անուանուի և կրորդ անգամ Եգիպտոս կ'երթայ, Ստիվ Թէլֆիդ փաշայի Հրովարտակը տանող պատգամաւորութեան հետ։

1878 Հոկտ. 28-ին կըր հակահասունեան Հայերէն ստուար խումբ մը առաջնորդութեամբ Հ. Մաղաքիա Վ. Օրմանեանի կը զլմէր Հայ Կուսակցական Եկեղեցւոյ գիրկը, Սեւեան փաշա եւս ընտանեօք կը դառնայ Մայրնի Եկեղեցին։


Սեւեան փաշա զբաղած է նաեւ զբակասնութեամբ և 1886ին «Ճաշակ Ոսկեղէն Դպրութեան» հանդէսին մէջ զրոած է ընտիր յօդուածներ, որոնց ամէնէն ուշագրաւն էր «Տեղեկագ







Բայց նոն է Նար-Պէյ Սրբազանը որ կը բուզէ տեղի ունեցած փոփոխման դէմ, նրբամիտ դիւանագէտը (Ալի փաշա) համակրութիւն յայտնելով բողոքին օրինաւորութեան՝ կը խոստանայ Նախարարաց Խորհուրդին յանձնել խնդիրը, բայց



195. Խորէն վրդ. Գալֆախան (Նար-Պէյ)

այս հանդիսաւոր վայրկեանին խնդիր ընելու պէտք չկայ և ահա հրամանը կ'արձակուի, Հասուն յաղթութեան գրօշակը ձեռքը նետի պէս առաջ կը սլանայ :

Շուարած ձերուկ Տեղապահն ալ նոյն կողմը կը սուբայ և ահա Խորէնի ձեռքը կը բռնէ Արիստակէս Սրբազանի թեւը, Սրբազանը դողդողով ի՞նչ կ'ընես Խորէն կ'ըսէ :

— Դուրս Սրբազան, դուրս եկուր ետեւէս, լաւ է դատուինք ու պատժուինք, քան թէ մեր ձեռքով ազգի և եկեղեցու նուիրական իրաւունքները զոհենք :

Տեղապահը և անոր անվեներ ուղեկիցը դուրս կ'ան, ամէն գալիք աչքի տակ առնելով, գէթ Հասունէն վար չկենալու համար : Ալի փաշա շուարած հարքի ելք մը կը փնտռէր :

Թագաւորը դուրս գալով կ'ընդունի Յունաց պատրիարքի ողջոյնը, նոյն ժամուն հարցնելով,

— Ո՛ւր է Հայոց ներկայացուցիչը :

— Տէր, անակնկալ հիւանդութեան պատճառաւ, նա կարոյ չեղաւ իր հաւատարիմ հպատակութեան զգացումները դնել Ձեր Գանձոյց օտից տակ, պատասխանեց հարամիտ Ալի փաշան :

Բայց եղածը եղաւ ու Թուրքիոյ Պատրիարքներու վայելած 500 տարուան առանձնաչնորհումները այսպէս ազատուեցան :

Խորէն Եղս.ի այս քաջագործութիւնը օրուան դիւցազնութիւնը եղաւ :

1860-էն ետք ստէպ վարած է Կրօնական Ժողովոյ ասենապետութիւնը և Երեսփոխանութիւն : Եկեղեցական պաշտօններու կարգէն Բերայի և Պէշիքթաշի եկեղեցիներուն քարոզչութիւնը և անգամ մին ալ Ռումանիա Հոգեւոր այցելութեան ելած է :

\* \*

Իր երկրորդ կարեւոր գործունէութիւնը եղած է Բանկայթիի Հայոց գերեզմանատան ազատումը՝ 1872ին երբ Եգիպտացի մեծահարուստ Խալիլ Շէրիֆ փաշա Արտաքին Գործոց Նախարար էր :

Հիւսէյին Ալիի փաշայի թելադրութեամբ որոշուած էր մեծ զօրանոց մը և զօրահրապարակ մը մը շինել այն լայնատարած հողին վրայ ուր կը տարածուէր Բերայի Գերեզմանատունը, որ մեզ համար թէ՛ նուիրական էր և թէ՛ մեծարժէք :

Խալիլ Շէրիֆ փաշա խիստ հրամանով մը յայտարարեց Հայոց Պատրիարքին կամ որոշեալ ժամանակամիջոցի մէջ դուրս հանել գերեզմանաքարերը ու տկորները և կամ սպասել որ զինուորները իրենց բրիչով կատարեն : Խրիմեան Հայրիկ Պատրիարք էր այդ թուականին և Ազգային Ժողովոյ կողմէն գրուած բողոքագիրը ձեռքը կը դիմէ Խալիլ Շէրիֆին, բայց ան գերեզմանոցը մաքրելու համար երեք օր միջոց կուտայ :

Այսպիսով, արցունքները աչքերէն կաթելով Խրիմեան կը հաղորդէ Ժողովին, որ խորունկ սուգի մէջ կը մնայ :

Խոր լուսութեան մէջ Խորէն Նար-Պէյ Պատրիարքին դառնալով կ'ըսէ. «Յանուն Աստուծոյ ու Կայսեր, յանուն մեր դարաւոր իրաւանց, Նախարարին ձեռքով մատուցուած՝ մեր աղերսագիրը խրոխտ արհամարհանաց հանդիպեցաւ, բայց պիտի վճարինք, ս'ի կրնայ երգնուլ որ՝

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ» պիտի հրատարակուի պրակ առ պրակ ամիսը անգամ մը, ամբողջութիւնը պիտի բաղկանայ 48 պրակներէ՝ 4 հատորի մէջ ամբողջութեամբ և պիտի պարունակէ երեւելի ազգայիններու լուսանկարները, կենսագրութիւնները և ձեռագիր անտիպ գրուածքները, կաթողիկոսներու և պատրիարքներու կոնդակները և այլն:

Կը շարունակուի Բ. Գ. Դ. հատորներու բաժանորդագրութիւնը 80 դրուչի:

Կոչում կ'ընենք հասարակութեան և բանասէրներու մեզ ուղարկել իրենց քով ունեցած տօքիւմանները, ըլլան լուսանկար թէ ձեռագիր և կամ կենսագրութիւններ որոնք անվճար իրենց կը վերադարձնենք դարձեալ:

Ամբողջ գործին բաժանորդագրութիւնն է կանխիկ մէկ օսմանեան ոսկի ամէն տեղի համար, իւրաքանչիւր հատորի համար 30 դրուչ:

Բաժանորդներու անունները պիտի հրատարակենք հետզհետէ:

Գործը պիտի աւարտի մինչև 1912 տարուայ սկիզբները և բաժանորդները պիտի ստանան իբր նուէր գեղարուեստական շքեղ կողքեր որոնք արուեստասէրներու յանձնած ենք պատրաստուելու համար և որոնք խորհրդանշանը պիտի ըլլան Հայ. Տպագրութեան 400 ամեայ Յոբելեանին:

Վստահ ենք թէ Հասարակութիւնը պիտի գնահատէ այս գործը որ բաղմամբախտ եղած է և որուն համար տարիներով տքնած տառապած ենք:

Հրատարակուած է արդէն առաջին հատորը որ կը վաճառուի 30 դրուչի Պոլիս Զարգարեան գրատուն, Բերա Վայսի գրավաճառատունը, Ալեքսանդրիա Յ. Ղազիկեանի և Օ. Գաբանձեանի և Գահիրէ Սուրէն Զարմաքճեանի քով:

Մեկ պրակի գինը 2 դրուչ, գաւառներու համար 400 փարա:

Իմել Զարգարեան Գրատուն, Պոլիս, Զաւմաքըլար, 24 — 26:

Կը ծախուի ամեն տեղ:



Մ Ե Ր Վ Ճ Ա Ր Ո Ղ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ն Ե Ր Ը

Հետզհետէ կը հրատարակենք անունները մեր բաժանորդներուն որոնք կը վճարեն իրենց բաժնեգինը, ասիկա կ'ընենք ամէն անոնց համար որոնք կ'ուզեն վստահ ըլլալ. անոնք որ կը վճարեն և անուններն հոս չեն տեսներ, անմիջապէս պէտք է մեզ իմաց տան:

68. — Վեհափառ Տ. Տ. Մասթոս Կաթողիկոս ամենայն Հայոց	4. հասորի	Ղրշ.	5055
69. — Գեղ. Տիրայր Ծ. վրդ. Մարգարեան	4. »		108
			108
70. — Յակոբ Տեր-Յակոբեան	4. »		108
71. — Կարապետ Չեփեմեան	Ա. Բ. Գ. »		81
72. — Ազն. Արսաւես Էֆ. Հիւրմիզ	Ա. Բ. »		60
73. — Գրիգոր Արգարեան	Ա. »		30
			5550

*Handwritten signature or mark.*

« Ազգային գրադարան »



NL0251058

